



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

Քաղ. Երևան

6 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

ԵԼԵՆԱ ՕՎՍՅԱՆՆԻԿՈՎԱՅԻ՝ 25.05.2018թ. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱ-  
ՑԱՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՈՂՈՔԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ելենա Օվսյաննիկովայի՝ 25.05.2018թ. մուտքագրված դիմումը Սահմանադրական դատարանի կողմից վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ դիմումում չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը՝ «...դիմումին կցվում է լիազորագիրը կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող այլ փաստաթուղթ», ինչպես նաև չի պահպանվել նույն օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի՝

«Անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո»:

2. Դիմողի կարծիքով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ անհատական դիմում ներկայացնելու 6-ամսյա ժամկետը պետք է հաշվարկել վերջնական դատական ակտն ստանալու պահից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ դիմողը խնդրում է այդ ժամկետը համարել իրավունքի ուժով “*ex jure*” վերականգնված, իսկ դիմումը՝ սահմանված ժամկետում ներկայացված:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն արձանագրում է, որ դիմողն արդեն իսկ բողոքին կից ներկայացրել է լիազոր ներկայացուցչին տրված լիազորագիրը:

Ինչ վերաբերում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 6-ամսյա ժամկետը վերջնական դատական ակտն ստանալու պահից հաշվարկելու մասին դիմողի խնդրանքին, ապա այն պետք է քննության առնվի դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ որոշում կայացնելով՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28 և 69-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

Բավարարել Ելենա Օվսյաննիկովայի բողոքը և դիմումը մուտքագրել  
Սահմանադրական դատարան:

Նախագահող՝

Դատավորներ՝

6 հունիսի 2018 թվականի  
ՍԴԴԿՈ/1-15